# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 26.02.2014թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «ՍՊ» ՍՊԸ-ի 2014 թվականի փետրվարի 26-ի գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2014թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի արդյունքում «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Սակկաբել» ԲԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

2. Կասեցնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Սակկաբել» ԲԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամ՝ Հրաչյա Ավետիսյան